

կողայոս՝ անուամբ 2 եկեղեցիներ գոյութիւն ունեցած են Պօլիս, մին Քօփ-Գարու, միւսը՝



Հիսար-Տիպի: Ըստ Հ. Ասատուրի՝ Արզարու տպարանը կը գտնուէր առաջնայն մէջ: Այդ եկեղեցին յետոյ քանդուած՝ մզկիթի վերածուած է (Քէֆլի ճամբ): Իսկ ըստ Օրմանեան Ս.Ի՛ միս Ս. Նիկողայոսն է (նոյնպէս աներակ) ուր գործած էր Արզար՝ որ վերջին գիրքը տպելուն տարին՝ Պօլսէն Էջմիածին անցած է: Իր նետքը կորսուած է պնտնետեա:



28. **Արեմիա Չէլեպի Քեօմիւրճեան.** —

Իր ժամանակին կարեւորագոյն դէմքերէն մին եղող այս պատմարան գրագէտին բացած Բ. տպարանն այ իր նախորդին պէս վաղանցուկ կեանք մը կ'ունենայ, 1677-8 ին անմարք և մանր տատերով լոյս ածելով 2 գիրք միայն, **Գիրք որ ՚ի մնացորդացն Յիսուս որդւոյ գրոցն Տեառն Ներսիսի Կլայնցոյ** (Կրօն. քերթուածներու տետրակ մը), **Տնօրինական տեղիք** (նկարագրութիւնը երուսաղէմի), երկուքն ալ իր նեղինակութիւնները: — Երեմիա Չէլեպի մեծ դեր կատարած է Պօլսոյ մէջ՝ իրրեւ նաշտարար ազգային գործիչ, մանաւանդ դաւանական խորութեանց առթիւ ծագած կռիւներուն ատեն: Քաջ լեզուագէտ, տաճկերէնի վերածած է Նոր Կտակարանը, Խորենացիի Պատմութիւնը, նաեւ յոյն և լատին լեզուներէ

ԱՐԳԱՐ ԳՊԻՐԻ
Կ. ՊՈԼԻՍ ՏՊԱԳՐԱՆՔ ԳՐԱՏՅՈՅ. ԼԵՆ ԷՉ ՄԸ

զանազան քարգմանութիւններ: Հեղինակած է 5 հատոր Օսմ. Պատմութիւն մը և այլ աշխարհագրական գործեր, տաղեր ու ճառեր: Իր երկերէն գլուխ գործոցը կարելի է նկատել ժամանակակից անցքերու պատմութիւնը (Վենետիկի վանքը՝ ձեռագիր) որմէ օգտուած է Հ. Չամչեան, իր «Հայոց Պատմութիւն»ը յօրինած ատեն: — Վենետիկի Միխիարեանը չաւաղոյն անակրնկալը պիտի առքած ըլլային հատուր Հայութեան և ի մասնաւորի Պօլսահայոց, երէ այդ **ձեռագիր** գործը Հայ Տպագրութեան 400ամեակին առթիւ **սպագիր** լոյս ընծայելին վերջապէս: — Քեօմիւրճեան 1695 ին մեռած է 60 տարու:



29. **Գրիգոր Մարտրանեցի.** —

Վերոյիշեալ Չէլեպին թելագրուած, անոր յօրինած փոքրաքանակ տատերը ձեռք կը ձգէ և բազում աշխատելով 1694 ին կը նիւնէ տպարան մը որ 40 տարուան գոյութիւն մը կ'ունենայ: — Ինք ծնած է Մարցուան, Մկրտիչի գաւակ. ուսում առած է Ամրտոյի վանքը՝ Ծաղիկ Սարգիս վարդապետէն, որմէ ծաղկարարութիւն ալ սորված է և որուն նեա 1684 ին Պօլիս գաղտնելով, այլ եւս բան-գործ ըրած՝ տպագրական արուեստին ետեւէն իյնալը: Վարպետ չէ ունեցած. ինքնիրեն նմուսցած է մամուլի և ձուլման օրէնքներուն, երկար ատեն փորձեր կատարելով և Երեմիա Չէլեպիի բողոքած կապարաններէն ներշնչուելով: Այս պատճառաւ իր առաջին տպագրութիւնները ձաշակէ գուրկէն, նակառակ իր բախած ջանքերուն: Գրիգոր յետոյ կրցած է բաւական խնամուած գործեր լոյս ընծայել՝ շնորհիւ իր յօրինած «գաղափար»ներուն և անոնցմով ձուլած «արձիճէ գիր»երուն. կը պատրաստէ «ցազագիր»եր, կը գծէ և կը փորագրէ «խորանագարդ»եր և այլ պատկերներ: — Իր տպարանին երախայրիքն է **Տաղարան** մը, տպագրութիւնը 1698 ին տարուած՝ 4 տարուան մէջ, գործակցութեամբ Կ. Պօլսեցի ԱՆ.ԱՏՈՒՐԻ (որուն թեղուն գործունէութեան պիտի անդրադառնանք քիչ վերջը): 1706 ին մինակն է այլ եւս և ունի իր «նորակերտ» աշխատանոցը. նոնկէ լոյս ընծայած է նետեւեպները. — 1706. **Խորհրդասեռ Սրբազան Պատարագի**